ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ՏՄԻՔ-ՀԲՄ-ԱՇՁԲ-19/01-1 **ծածկագրով հրատապ բաց մրցույթի նիստի**

Ք. Իջևան **<<01>> հոկտեմբերի 2019թ.**
ժ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Այդինյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հարությունյան, Ա. Պարոնյան, Ա. Ծատուրյան, Դ. Վիրաբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Նազինյան

ՀՀ ՏՄԻՔ-ՀԲՄ-ԱՇՁԲ-19/01-1 **ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգ**
Ա. Այդինյան

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հարկային պարտավորությունների վերաբերյալ:
4. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի և «Պստո» ՍՊԸ-ի **հետ**

Քանի որ գնումը իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել էր.

Հիմք ընդունել ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթները՝ 2019 թվականին հուլիսի սեպտեմբերի 20-ին, ժամը 10-00-ին ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի վարչական շենքում՝ գների նվազեցման շուրջ կազմակերպել բանակցություններ:

Նիստին ներկա էր ին «Պստո» ՍՊԸ-ն, իսկ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն նիստին չէր ներկայացել: Բանակցության ընթացքում մասնակից «Պստո» ՍՊԸ-ն վերանայեց իրենց կողմից ներկայացված գնային առաջարկները, արդյունքում մասնակիցների վերջնական գնային առաջարկները մնացին անփոփոխ և ունեցավ հետևյալ տեսքը.

h/h	Մասնակցի անվանումը	Աշխատանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝առանց ԱԱՀ-ի	Առաջարկված գնի՝ ԱԱՀ-ն	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	«Պստո» ՍՊԸ	87778160	71975000	14395000	86370000
2	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ		72000000	14400000	86400000

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Ներկայացրած գնային առաջարկի և բանակցության արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Պստո>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հարկային պարտավորությունների վերաբերյալ

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

'' Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի՝ <<Պստո>> ՍՊԸ–ին առաջարկելով՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդ աշխատանքային օրը՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան 6 հասցեում, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Այդինյան

Անդամներ՝ _____ Ա. Պարոնյան

_____ Հ. Հարությունյան

_____ Դ. Վիրաբյան

_____ Ա. Ծատուրյան

Քարտուղար՝ _____ Ա. Նազինյան